

տում է բառերի վերջընթեր վանկը. բայց դա արդէն գրաբարի վերջընթեր վանկը չէ, որ դարձած էր վերջին, այլ շեշտը մի վանկ առաջ է քաշուած: Եթէ, օրինակ, հին ձեւը «քաղաք» բառի «քաղաքի» էր (համ. վրացերէն «քալաքի»)՝ գրաբարը շեշտում էր վերջընթեր վանկը — «քաղաքի», ուստի բառը իր վերջին անշեշտ ձայնաւորը կորցնելով՝ դարձած էր «քաղաք». իսկ դադախցին այս նո՛ր բառի վերջընթեր վանկն է շեշտում ասելով «քա՛ղաք», որ հնագոյն «քաղաքի» ձեւի վերջինից երրորդ վանկն է եւ ոչ թէ երկրորդը:

Այսպիսով մեր շեշտադրութեան կարգը Մառի ասելով եղած է վերջընթեր վանկը շեշտել. ժողովուրդը պահել է այդ կարգը. հին հայն ունէր «քաղաքի» բառ, ուստի ասում էր «քաղա՛քի» (վերջընթերը շեշտած), նոր հայն ունի «քաղաք» բառը եւ ասում է «քա՛ղաք» — (կրկին վերջընթերն է շեշտած): Բառն է փոխուած եւ ոչ թէ շեշտի կանոնը: — Ըստ էութեան սակայն Ն. Մառն եւս ընդունում է, որ գրաբար բառերի վերջին վանկն է շեշտուած, որոնք երբեմն վերջընթեր էին: Բայց նա եւս մի նորութիւն է ասում. այսինքն՝ սղած վանկերը բոլորովին մթազնած չէին հին հայերէնի մէջ. եւ գրաբարի քերականութեան շատ բնորոշ երեւոյթները այդ հանգամանքով կարելի է բացատրել:

Ամփոփելով գիտունների մտածումը կարող ենք ասել, թէ նրանց կարծիքով հնագոյն հայերէնի մէջ շեշտը վերջընթեր վանկի վրայ էր. դրա հետեւանքով բառերը կորցրին իրենց վերջին վանկերը եւ Ե. դարում՝ երբ գրի առնւեց գրաբար լեզուն՝ մեր բառերը շեշտում էին վերջին վանկի վրայ: Յետագային հայոց բառերը երկրորդական շեշտ ունեցան. (Մէյէ). իսկ սղած հին վանկերը բոլորովին չմթազնեցին (Մառ):

Նախ քան առաջ անցնելը շտկենք այստեղ Մէյէի տեսութիւնը երկրորդական շեշտի մասին:

«Նոր հայերէնի մէջ, ասում է նա, բացի գլխաւոր շեշտը որ զարկում է բառի վերջին վանկին, նկատելի է մի երկրորդական շեշտ, որ զարկում է առաջին վանկին. այս երկրոր-

դական շեշտը աւելի առաջ գոյութիւն ունէր քան բառամիջի ա-ի անկումը, որ առաջ եկաւ դասական լեզուի հաստատումից յետոյ. եւ իսկապէս ա-ն ընկնում է այն ժամանակ, երբ նա գտնւում է առաջին եւ վերջին ձայնաւորի միջեւ»: Եւ բերում է «հաւատամ» — «հաւատամ» օրինակը:

Երկու կողմից պէտք է սահմանափակել այս կարծիքը. նախ ծաւալի տեսակէտով: Թէ-եւ ճիշդ է, որ արեւմտեան բարբառների մէջ «թագաւորը» դառնում է «թաղւոր» եւ «հաւատամը»՝ «հաւտամ», բայց օրինակ Ղարաբաղի բարբառում նոյն բառերը դառնում են «հըւատամ» եւ «թփաւեր», ուրեմն Մէյէի դիտած երեւոյթի ազդեցութիւնը բովանդակ հայ լեզուի վրայ չի տարածւում: Երկրորդ՝ այդ օրէնքը պէտք է ճշդել ժամանակի տեսակէտով. ոչ միայն դասական լեզուից յետոյ, այլ եւ առաջ գործած է նոյն օրէնքը. այսպէս՝ դասական «յիսուն» բառը նոյն ինքն Մէյէի կարծիքով ծագած է մի նախաւոր «հինգիսուն» ձեւից (Gram. էջ 73) արդէ՛ եթէ միջին վանկն ընկնում է այն պատճառով, որ գտնւում է առաջին եւ վերջին շեշտած վանկերի միջեւ՝ ապա «հինգիսուն»ը, որ «հաւատամի» պէս եռաւանկ է «յիսուն» դառնալու համար, որ «հաւտամ»ի պէս երկվանկ է, պէտք է իր առաջին վանկը շեշտած ունենար, հոգ չէ թէ «երկրորդական» շեշտով:

Այսպիսով երկրորդական շեշտը գործած է եւ նախադրական շրջանում. նա ոչ թէ նոր լեզուի, այլ հայոց լեզուի հիմնական երեւոյթներից մէկն է: Այս մասին զեռ առիթ կ'ունենամ խօսելու. միայն իբր նոր ապացոյց առէք «յոայցեմ» ձեւը. անշուշտ սա նախապէս եղած է «տաիցեմ» — այսինքն՝ երեք վանկ. անհրաժեշտ է, որ առաջին ու վերջին վանկը շեշտուած լինէին, որ ի-ն կարողանար սղել եւ կիսաձայն յ դառնալով՝ բառը դարձնէր երկվանկ — «տայցեմ». օրինակներն անհամար են. բայց եղածն էլ բաւական է ցոյց տալու համար, որ հին ժամանակ մեր բաղմամբանկ բառերը մի քանի շեշտ ունէին: Ես առիթ կ'ունենամ նրանց տարազները տալու:

Որքան ճիշդ է այն բնաբանը, որ Հ. Ա.